



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՄԻՋԱՆՃՆԱՅԻՆ ԽԱՂՈՐԴԱԿԵՐՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՆԹՅԱԳՈՒՄ

ԱՌԱՐԿԱ Կենսաբանություն

ՀԵՂԻՆԱԿ Սիրանուշ Ավետիսյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գեղակերտի միջն դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....	2
1.Միջանձնային հաղորդակցման էությունն ու զարգացումը.....	3
1.1 Միջանձնային հաղորդակցման հիմնախնդիրն անձի ձևավորման և զարգացման գործընթացում.....	3
1.2 Հաղորդակցման միջանձնային մակարդակը և դրա կառավարման առանձնահատկությունները.....	4
2.Հաղորդակցման բնույթն ու առանձնահատկությունները կրթական գործընթացում.....	10
2.1 Սոցիալական և կրթական հաղորդակցությունների մակարդակները.....	10
2.2 Սոցիալական և կրթական հաղորդակցությունների միջոցները.....	11
2.3 Բախումնային հաղորդակցում, պատճառները և հաղթահարման ուղիները.....	13
3.Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն.....	15
Եզրակացություն.....	20
Օգտագործված գրականության ցանկ.....	21
Հավելված.....	22

Ներածություն

*«Մարդկանց հետ հաղորդակցման ունակությունը նույնպիսի ապրանք է, ինչպիսիք են շաքարն ու սուրճը: Ես պատրաստ եմ այդ ունակության համար վճարել ավելի քան այս աշխարհի որևէ այլ ապրանքի համար»
Ջոն Ռոկֆելլեր*

Ժամանակակից տեղեկատվական հասարակությունը զարգանում է աննախադեպ արագությամբ: Նման արագ զարգացող հասարակության խնդիրն է համապատասխանեցնել կրթական համակարգը նոր պահանջներին, դրա շնորհիվ ձևավորել անձ, որն ի վիճակի կլինի ակտիվորեն մասնակցել հասարակության զարգացման գործընթացին, ինչով էլ պայմանավորված է մեր հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել միջանձնային հաղորդակցման դերը կրթական գործընթացում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- Ուսումնասիրել միջանձնային հաղորդակցման էությունն ու զարգացումը
- Պարզել հաղորդակցման բնույթն ու առանձնահատկությունները կրթական գործընթացում
- որոշել այլ անձանց հետ շփման, հաղորդակցման մակարդակը, անձնական կամ գործնական հարաբերություններ հաստատելու և պահպանելու ունակությունը աշակերտների մոտ

Ակտիվ անձի ձևավորումը պայմանավորված է անձի հաղորդակցական ակտիվությամբ:

Կրթական համակարգի գործունեությունը պետք է ուղղված լինի պատրաստելու այնպիսի քաղաքացի, որն ունակ լինի լուծելու հասարակության առջև դրված խնդիրները և աշխատաշուկայում գտնի իր տեղը:

Հտազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, , եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից:

1. Միջանձնային հաղորդակցման էությունն ու զարգացումը

1.1 Միջանձնային հաղորդակցման հիմնախնդիրն անձի ձևավորման և զարգացման գործընթացում

Արդի պահանջներին համապատասխան ինքնազարգացող անձի ձևավորման ու զարգացման նպատակը առաջ է քաշում կրթական գործընթացի վերանայման, վերախմաստավորման, հետևապես նաև ժամանակակից կրթական գործընթացում միջանձնային հաղորդակցման նոր հնարավորությունների բացահայտման ու կիրառման խնդիրներ:

Ինքնազարգացող անձի ձևավորման նպատակը ենթադրում է, որ կրթական գործընթացը կլինի արդյունավետ, եթե կրթական գործընթացի վերանայումից և վերախմաստավորումից հետո ոչ միայն տեսականորեն մշակվի, այլև գործնականում համարժեք միջանձնային հաղորդակցումն իրականացվի նոր՝ «կողմնորոշող սուբյեկտ-ինքնազարգացող սուբյեկտ» մոդուլով:

Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է միջանձնային հաղորդակցման մոդուլով, դրա իրականացման ուղիներով ու տեխնոլոգիաներով, որովհետև անձի ձևավորումն ու զարգացումը հաղորդակցման արդյունք են: Միջանձնային հաղորդակցումն ինչպես որ կարող է ստեղծել անձի ձևավորման ու ներքին հնարավորությունների զարգացման պայմաններ, այնպես էլ կարող է սահմանափակել այդ հնարավորությունների դրսևորումն ու զարգացումը:

Միջանձնային հաղորդակցման շնորհիվ և նրա ստեղծած պայմաններին համապատասխան մարդը ոչ միայն ձևավորվում է որպես անձ, այլև ճանաչում է ինքն իրեն, բացահայտում իր ներքին հնարավորությունները: Դա մարդու զարգացման կարևորագույն պայմանն է:

Այսպիսով կարող ենք ասել, որ անձի ձևավորումն ու զարգացումն իրականանում են միջանձնային հաղորդակցման ընձեռնած հնարավորությունների, հաղորդակցման իրականացման մոդելներին համապատասխան: Իսկ «միջանձնային իրադրությունների» նպատակաուղղված կազմակերպումն ուղղորդում է անձի ձևավորման ու զարգացման գործընթացը:

Մի շարք ուսումնասիրությունների վերլուծության արդյունքնում պարզ է դառնում, որ անձի ձևավորման ու զարգացման գործընթացը հնարավոր է վերահսկել, նույնիսկ կառավարել միջանձնային հաղորդակցման միջոցով: Դա նշանակում է, որ անհրաժեշտ է կրթական գործընթացում ստեղծել ժամանակակից պահանջներին համարժեք պայմաններ միջանձնային հաղորդակցման նոր ուղիների ու տեխնոլոգիաների միջոցով:

Հոգեբանական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել հաղորդակցման երեք կարևոր տեսանկյուն՝ հաղորդակցային (տեղեկատվության փոխանակում մարդկանց միջև), պերցեպտիվ (մարդկանց փոխըմբռնում), ինտերակտիվ (շփվողների միջև փոխգործունեության կազմակերպում): Կարելի է եզրակացնել, որ հաղորդակցումը գործնականում հետևյալ երեք բաղադրիչների համակցումն է: Հաղորդակցումը տեղեկատվություն ստանալու ճանապարհ է: Այն և գործունեության առանձնահատուկ ձև է և միևնույն ժամանակ միջանձնային հարաբերությունների հաստատման միջոց: Անդրադառնանք հաղորդակցման բոլոր գործառույթներին, որոնք էական կարևորություն են ներկայացնում անձի զարգացման և նրա սոցիալականացման գործընթացի համար:

Հաղորդակցման ընթացքում ձևավորվում է սոցիալական փոխգործունեության, խմբի կարգուկանոնին ենթարկվելու անհրաժեշտ ունակություն: Միևնույն ժամանակ հնարավորություն է ընձեռվում հաստատելու սեփական իրավունքները, ձևավորվում են հաղորդակցային համապատասխան որակներ: Դա մի յուրօրինակ հուզական շփման ձև է, քանի որ խմբին պատկանելու գիտակցությունը առաջացնում է հուզական բարեկեցության զգացողություն և ձևավորում ինքնահարգանք: Միջանձնային հաղորդակցումը առաջատար գործունեություն է, քանի որ այդտեղ է իրականանում ինքնագիտակցության ձեռքբերումը, սեփական եսի գիտակցումը, իր մասին պատկերացումների ձևավորումը: Միջանձնային հարաբերությունները չափազանց կարևոր են անձի կենսագործունեության համար: Այդ առումով առավել էական նշանակություն ունի շփումը հասակակիցների հետ: Այս շրջանում շփման գործընթացի մոտիվացիայի ոլորտում տեղի են ունենում էական փոփոխություններ: Կարծես մեծերի հետ հարաբերությունները կորցնում են իրենց հրատապությունը, և առավել կարևորություն է ստանում շփումը հասակակիցների հետ: Հասակակիցների հետ շփումը դառնում է ամենակարևոր պահանջմունքներից մեկը, քանի որ երեխաներն ունեն մի շարք առանձնահատուկ հետաքրքրություններ և հուզող հարցեր, որոնց բավարարումը հնարավոր է միայն անմիջական շփման միջոցով:

1.2 Հաղորդակցման միջանձնային մակարդակը և դրա կառավարման առանձնահատկությունները

Վերացական գաղափարներ փոխանցելու ունակությունը մարդկության ամենակարևոր տարբերակիչ հատկություններից է: Հաղորդակցումը տեղեկատվության, դրա իմաստային նշանակության փոխանակման գործընթաց է երկու կամ ավելի անձանց միջև: Միջանձնային հաղորդակցման անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը բացատրվում է հենց մարդու

լինելիության պայմանով. մարդը, լինելով հասարակական երևույթ, չի կարող գոյություն ունենալ առանց հաղորդակցման, քանի որ այն հանդիսանում է նրա կարևորագույն պահանջմունքներից մեկը:

Միջանձնային հաղորդակցումն ընկալվում է որպես հաղորդակիցների միջև միաժամանակյա փախազդեցության և միմյանց վրա ազդեցության գործընթաց: Այն բնորոշվում է մի շարք առանձնահատկություններով, որոնք առանձնացնում են իրեն հաղորդակցման այլ տեսակներից: Միջանձնային հաղորդակցումը կարող է իրականացվել տարբեր ձևերով: Միջանձնային հաղորդակցման իդեալական տարբերակ է համարվում երկու անձանց միջև ոչ ֆորմալ զրույցը: Հաղորդակցման այս տեսակին հատուկ են զրույցի նյութի հաճախակի փոփոխությունը, ակտիվությամբ պայմանավորված՝ մի կողմի գերկայությունը, իսկ մյուսի ենթակայությունը, նախորդ թեմային վերադառնալու հնարավորությունը, եզրափակիչ փուլի հասնելու անկարևորությունը, քանի որ զրույցը կարող է ընդհատվել հանգամանքների բերումով: Ֆորմալ իրավիճակների դեպքում, որպես կանոն, օգտագործվում են հաղորդակցման համընդհանուր նորմերը: Միջանձնային հաղորդակցման արդյունավետությունը որոշվում է երկու հիմնական, սոցիալապես կարևոր գործառույթների ակտուալացմամբ՝ փոխազդեցություն և ազդեցություն: Մարդկանց միջև հաղորդակցումն իրականացվում է վերբալ և ոչ վերբալ մեթոդների օգնությամբ: Վերբալ հաղորդակցումն իրականացվում է բանավոր կամ գրավոր կերպով ինֆորմացիայի փոխանակման եղանակներով (երկխոսություն, ժողով, քննարկում, հրաման, ցուցում և այլն), իսկ ոչ վերբալը՝ մարմնի շարժումների, ժեստերի և խոսքի պարամետրերի (ինտոնացիա, տեմբր, խոսքի տեմպ, ձայնի բարձրություն և այլն): Հաղորդակցման հիմնական կարողությունները համարվում են նաև հաղորդակցման ապահովման հիմնական միջոցներ: Իր կարևորությամբ լսելու կարողությունը գտնվում է առաջին տեղում և զբաղեցնում է միջանձնային հարաբերությունների ժամանակի մինչև 45%-ը: Խոսելը զբաղեցնում է մոտավոր 30%-ը: Հաղորդակցման արդյունավետության բարձրացման համար մեծ ուշադրություն պետք է դարձնել խոսքի կուլտուրային: Այս գործում կարևոր դերակատարություն ունի կարդալը:

Հաղորդակցման գործընթացում շատ մեծ դերակատարություն ունի նաև մարդու տեսակը: Զրուցակցի տեսակի ժամանակին բացահայտումը թույլ է տալիս հարմարեցնել նախադասությունները և բանակցություններում լրացուցիչ հնարավորություն ունենալ հաջողության հասնելու համար:

Փորձելով կառավարել միջանձնային հաղորդակցման գործընթացը պետք է հաշվի առնել այն, որ *խոսքը* պետք սկսել եզրակացությունից, այլ ոչ թե տարբեր փաստարկների միջոցով նրան տանել դեպի ցանկացած արդյունքը: Սա բացատրվում է նրանով, որ շատ հավանական է, որ զրուցակիցը չհասկանա միտքը, և չմտածի այն ուղղությամբ, որով որ պետք է մտածի անհրաժեշտ եզրակացությանը հասնելու համար: Բացի այդ, նա զրույցի ընթացքում կարող է մոռանալ

փաստարկները: Իսկ եթե նա ի սկզբանե իմանա, թե խոսքն ինչին է վերաբերում և «ուր» պետք է գնալ, ապա այս դեպքում կատարվի ցանկալի արդյունքը:

Խոսքի ճիշտ ավգործիքն այսպիսին է՝

- Նախ եզրակացությունները,
- Ապա փաստարկները, որոնք ապացուցում են եզրակացության ճշմարտացի լինելը

Կարևոր է իմանալ, որ խոսքի մեջ օգտագործվող շատ բառերը, նախաբանը, անկարևոր մանրուքները բարդացնում են ինֆորմացիայի ընկալումը: Մարդու գիտակցությունը սահմանափակ է իր ընկալմամբ, այդ իսկ պատճառով պետք է կարևորը հայտնել հնարավորինս հակիրճ և ընկալելի, առանց ավելորդությունների: Որքան կարճ և պարզ է հաղորդածը, այնքան ավելի հեշտ այն կհասականա գրուցակիցը:

Հաղորդակցման գործընթացում արդյունքի տեսանկյունից շատ կարևոր է նաև ինտոնացիան: Կարևոր է այն, թե ինչպես է ասված, այլ ոչ թե ինչ է ասված: Անգամ ամենաչեզոք խոսքը, եթե ասվում է թշնամական ինտոնացիայով, ընկալվում է որպես թշնամական խոսք: Մարդիկ իրենք իրենց ինտոնացիան այս կամ այն կերպ չեն ընկալում, քանի որ այն ձևավորվել է շատ վաղ և միայն դիմիացինի ոչ վերբալ հաղորդակցումից կամ այլոց կարծիքից կարող է հասկանալ իր ինտոնացիան ինչպիսին է: Կարևորվում է նաև ճիշտ խոսքերի ընտրությունը՝ կախված իրավիճակից: Եթե դիմացինը հուզված է, անհանգստացած, ապա պետք է ընտրել հնարավորինս չեզոք և «փափուկ» խոսքեր, որպեսզի խոսքերն այլ կերպ ընկելելու վտանգն անհետանա:

Այս կյանքում յուրաքանչյուր մարդ ունի իր այն «պահանջմունքները», որոնք դրսևորվում են հաղորդակցման ընթացքում. կան մարդիկ, ովքեր սիրում են խոսակցության ընթացքում համառոտ կերպով խոսել իրենց ձեռքբերումների մասին, կան մարդիկ, ովքեր սիրում են ցուցադրել իրենց ահռելի գիտելիքներն այս կամ այն ոլորտից: Կան նաև մարդիկ, ովքեր խոսակցության ընթացքում ցանկանում են պարբերաբար շեշտել իրենց կարգավիճակն ու ունեցած պաշտոնը: Սա հաճախ ոչ միայն նյարդայնացնում է գրուցակցին, այլ նաև բացահայտում է տվյալ անձի ունեցած այն թույլ կողմերը, որոնց օգնությամբ հետագայում կարելի է կառավարել նրան մանիպուլյացիաների միջոցով: Եթե յուրաքանչյուր անձ պետք է փորձի մաքսիմալ կերպով թաքցնել իր այս «պահանջմունքները», ապա դիմացինին կառավարելու համար նա պետք է նրան դրդի դրանք բացահայտել: Նա դա կարող է անել ոչ միայն կեղծ հարցերի այլ միայն լսելու միջոցով: Կեղծ հարցերը շատ արագ են ակնհայտ դառնում: Իսկ այն անձը, ով դիմացինին թույլ է տալիս իր ներկայությամբ զգալ այնպես, ինչպես իրեն դուրս է գալիս, ստանում է նրա վստահությունը:

Եթե գրուցակիցը բավականին երկար ժամանակ հեռանում է գրույցի բուն նյութից, ապա մոտակա դադարի ժամանակ կարելի է նրան հարցի միջոցով ետ վերադարձնել

դեպի գրույցի նախկին թեման: Եթե դա առաջացնի նրա վրդովմունքը, ապա գրուցակիցը կարող է պարզապես նշել, որ կարծել է թե նա ավարտել է:

Զրույցի ընթացքում, եթե դիմացինի պահվածքը դուր չի գալիս, կարևոր է այդ էմոցիաները թաքցնել: Դա կարելի է անել միայն մի կերպ. պետք է հստակ կանոն սահմանել, որ չի կարելի ավերից դուրս գալ և տրվել էմոցիաներին:

Զրուցակցի դրական արձագանքը ստանալու համար շատ կարևոր է ճիշտ հաղորդակցում և ճիշտ խոսք կառուցել: Դա իրականացնելու գործում կարևորվում է *տրանսակցիոն վերլուծությունը*: Տրանսակցիոն վերլուծությունը յուրահատուկ ուղղություն է ինչպես տեսական հոգեբանության, այնպես էլ հոգեթերապևտիկ պրակտիկայում: Տրանսակցիոն վերլուծությունը հոգեվերլուծական տեսություն է, ունի թե՛ անհատական, թե՛ խմբային տեխնիկաներ: Այս ուղղության հիմնադիր Է. Բեռնը կարևորում էր մարդու անգիտակցականը և մանկական տարիքը: Նրա կարծիքով մարդու հոգեկան կյանքը հիմնված է լարվածություն-լիցքաթափում-հավասարակշռություն սկզբունքի վրա: Մարդն անգիտակցորեն ձգտում է ներդաշնակության: Հիմնականում սա վերաբերում է ֆիզիկական վիճակներին, որոնք սակայն փոխանցվում են հոգեկան ոլորտ:

Տրանսակցիոն վերլուծության մեջ կա մի ուղղություն, որը կոչվում է կառուցվածքային վերլուծություն: Ըստ Բեռնի՝ մարդու անձը կազմված է երեք մասերից, ենթամասերից կամ էգո-վիճակներից՝

1. Երեխա էգո-վիճակ
2. Ծնող էգո-վիճակ
3. Մեծահասակ էգո-վիճակ

Ինչպես ավելի վաղ նշել ենք, հաղորդակցման գործընթացում շատ կարևոր է *չսեղու* կարողությունը: Կա լսելու երեք տեխնիկա՝

1. Առանց արձագանքի լսել. Միայն լսել և խրախուսել գրույցը
2. Լսել որոշակի արձագանքով. Ստուգել գրուցակցի ասածը ճիշտ է հասկացվել, թե ոչ
3. Ակտիվ լսել. Զրուցակցից ստանալ հետաքրքրող տեղեկատվությունը:

Բացի գրուցակցին հասկանալուց շատ կարևոր է, որ գրուցակիցը արձագանքի միջոցով հասկանա, որ իրեն լսում են: Կարևոր է նաև այն, որ վերոնշյալ երեք տեխնիկաների օգտագործման ընթացքում գրուցակցին չպետք է ընդհատել, պետք է նրան թույլ տալ խոսքն ավարտել:

Ոչ ռեֆլեքսիվ լսելու ընթացքում պետք է՝

- Հասկանալ տեքստը
- Խրախուսել գրույցի հետագա ընթացքը
- Հիշել ասվածը

Տեքստը հասկանալու համար պետք է կենտրոնացնել ուշադրությունը, քանի որ շատ հաճախ ասվածի շատ քիչ հատվածն է լսում գրուցակիցը:

Զրույցի հետագա ընթացքը կարելի է խրախուսել հետևյալ մեթոդներով՝

- Հայացք
- Միմիկա
- Դիրք, մարմնի շարժումներ և ժեստիկուլյացիա
- Զրուցակիցների միջև հեռավորություն, դրա փոփոխություն

Հաստատուն հայացքը հետաքրքրվածության նշան է, և կարող է խրախուսել զրուցակցին շարունակել խոսքը: Եթե դիմացինը նայում է հատակին, և չի նայում զրուցակցին, չի փորձում «բռնել» նրա հայացքը, ապա դա կարող է ընկալվել որպես անուշադրության նշան: Զրույցի սկզբում պետք է ստեղծել կարճաժամկետ վիզուալ կոնտակտ: Սակայն, վերջինս չարաշահել ևս պետք չի:

Կարևոր է նաև դեմքի արտահայտությունը, որը պետք է լինի դրական:

Դիրքը ևս շատ բան է ասում զրուցակցի և թեմայի նկատմամբ վերաբերմունքի մասին: Եթե հաղորդակիցը առաջանում է դեպի զրուցակիցը, ապա դա հետաքրքրվածության նշան է: Եթե զրույցի ընթացքում նա թաքցնում է ձեռքերը, խաչում է դրանք, կամ պայուսակը դնում է ոտքերին, նա արգելք է ստեղծում իր և զրուցակցի միջև: Անկեղծ և շարունակական զրույցի համար կարևոր են բաց դիրքերը: Զրուցակիցների միջև կա որոշակի հեռավորություն, որը զրույցի ընթացքում կարող է փոխվել որոշակի նպատակներով:

Հաղորդակիցների միջև տարածություններն են՝

- Ինտիմ տարածություն-մինչև 45 սմ: Սա մտերիմների տարածությունն է: Երբ այլ մարդիկ մուտք են գործում այստեղ, մարդը սկսում է անհանսգություն զգալ
- Անձնական տարածություն-45-120 սմ: Այն շատ հարմար է ընկերական հանդիպումների և բանակցությունների համար
- Սոցիալական տարածություն-1.2-3.5մ: Այս հեռավորության վրա մարդիկ անձանոթների հետ շփվելիս իրենց հանգիստ են զգում
- Հանրային տարածություն-3.5-ից ավելի: Այս հեռավորության վրա են սովորաբար տեղի ունենում հաղորդակումներ մեծաքանակ մարդկանց հետ

Գիտակցաբար փոխելով հեռավորությունը, զրուցակիցը կարող է դիմացինին հասկացնել իրա տրամադրվածությունը: Սակայն, դա պետք է անել զգուշավոր և չափի մեջ, որպեսզի հակառակ ազդեցություն չունենա:

Այստեղ կարևոր է նաև հարմարությունը: Դեմ դիմաց նստելը խթանում է առճակատումը, իսկ միմյանց կողի նստելը՝ ոչ: Շրջանաձև նստելը հիմնականում հարմար է բանակցությունների, քննարկումների համար: Դպրոցականների նման շարքով նստելը պետք է այն դեպքում, երբ կարևոր է, որ մեկին լսեն, և միմյանց հետ զրույցի չբռնվեն:

Վստահության մթնոլորտ ստեղծելու համար զրույցի ժամանակ կարևոր է, որպեսզի միմյանց միջև չգտնվեն այլ իրեր: Նախ, առարկան թույլ չի տալիս ամբողջապես տեսնել ոչ վերբալ արձագանքները, և երկրորդ՝ զրուցակցի մոտ ստեղծում է պաշտպանվածության Վերացական գաղափարներ փոխանցելու ունակությունը

մարդկության ամենակարևոր տարբերակիչ հատկություններից է: Հաղորդակցումը տեղեկատվության, դրա իմաստային նշանակության փոխանակման գործընթաց է երկու կամ ավելի անձանց միջև: Միջանձնային հաղորդակցման անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը բացատրվում է հենց մարդու լինելիության պայմանով. մարդը, լինելով հասարակական երևույթ, չի կարող գոյություն ունենալ առանց հաղորդակցման, քանի որ այն հանդիսանում է նրա կարևորագույն պահանջմունքներից մեկը:

Ոչ միայն արված քննադատությունը պետք է լինի կառուցողական, այլ նաև կարևոր է ուղղված քննադատությունը ևս ընունել կառուցողական կերպով:

2. Հաղորդակցման բնույթն ու առանձնահատկությունները կրթական գործընթացում

2.1 Սոցիալական և կրթական հաղորդակցությունների մակարդակները

Հաղորդակցման ուսումնասիրության և դրա առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հաղորդակցման մակարդակների տարրոշման հիմնահարցը: Մակարդակ հասկացությունը պայմանական է: Հումանիտար գիտություններում այն հնարավորություն է տալիս վեր հանել միևնույն երևույթի կամ գործընթացի տարբեր կողմերը: Հաղորդակցման մակարդակ ասելով հասկանում ենք որոշակի վարքագծային դրսևորումներ, որոնք հնարավորություն են ընձեռում վերլուծելու հաղորդակցվողների ներգործությունների արդյունքները, նրանց փոխներգործությունների բնույթը:

Հաղորդակցման մեջ դիտարկվում են՝ ներանձնային, միջանձնային, ներխմբային և միջխմբային, ինպես նաև զանգվածային կամ հանրային հաղորդակցման տեսակները:

Միջանձնային հաղորդակցումը անձի ձևավորման և զարգացման տեսանկյունից ամենակարևոր մակարդակն է, քանի որ նրանով է սկսվում հաղորդակցումն ընդհանրապես, նրա միջոցով են ձևավորվում մյուս մակարդակները, և հնարավոր դարձնում նրանց գոյությունը, և որ ամենակարևորն է, միջանձնային հաղորդակցման մեջ և միջոցով են սկսվում մանկավարժական գործունեությունը, կրթական գործընթացը, անձի ձևավորումն ու զարգացումը: Մարդու կյանքի սկզբնական շրջանում առկա է միայն միջանցնային հաղորդակցում, ավելի ուշ ներքին խոսքի հետ միասին ձևավորվում է նաև ներանձնային հաղորդակցումը՝ որպես միջանձնային հաղորդակցման արդյունք: **Ներանձնային հաղորդակցում կամ ինքնահաղորդակցումը** ոչ բոլոր տեսաբաններն են դիտարկում և ենթարկում վերլուծության մյուս մակարդակների հետ մեկտեղ: Այն դժվար ուսումնասիրելի է, որովհետև բավականին դժվար հարցեր են այլ մարդու ներանձնային հաղորդակցման դրսևորումների դիտարկումը: Ներանձնային հաղորդակցումը դիտարկվում է որպես մարդու գիտակցված կամ չգիտակցված շփումն ինքն իր հետ խոսքային և ոչ խոսքային մակարդակներում: Ներանձնային հաղորդակցումը այլ կերպ անվանում են ինքնահաղորդակցում քանի որ բացակայում է կողմնակի հաղորդակիցը: Առանձնացվում են ներանձնային հաղորդակցման հետևյալ դրսևորումները՝ երազների վերաբերյալ մտորումները, ներքին երկխոսությունները, ինքնաքննադատությունը և այլն: **Ներ- և միջխմբային հաղորդակցում:** Հաղորդակցման

ներ- և միջխմբային մակարդակները ավելի բարդ են և ձևավորվում են ճանաչողական, ուսումնական և աշխատանքային գործունեության ընթացքում: Մարդու համար ներխմբային հաղորդակցման 1-ին մոդելը **ընտանիքն** է, իսկ միջխմբայինը՝ **ընտանիք-դպրոց** փոխգործունեությունը: Խմբային հաղորդակցումն ունի տարներ դրսևորումներ և ընդգրկում է տարբեր փոխհարաբերություններն դրանք ուսումնասիրելու նպատակով այն բաժանում ենք 3 խմբի՝ ընտանեկան, կրթական, միջավայրային: **Հանրային կամ զանգվածային հաղորդակցում:** Այս մակարդակը ունի մի շարք տարբերակիչ կողմեր՝

- Հանրային հաղորդակցման մեթոդները հնարավորություն են տալիս ներգործություն ունենալու ոչ միայն դեմ առ դեմ կամ կոնկրետ անձի հետ աշխատանքներում, այլև տարածության և ժամանակի մեջ.
- Հաղորդակցման ներգործությունները կարելի է իրականացնել ամենատարբեր միջոցներով, որոնք տեսանելի՝ վիզուալ են.
- Հենց հանրային հաղորդակցման միջոցով է իրականացվում դաստիարակության կերպավորումը(վիզուալիզացիան) անձի ուղղորդման, ինպես նաև զարգացման և ընդհանուր կրթական նպատակներով:

Հաղորդակցման մակարդակների վերլուծությունը հնարավոր է տալիս բացահայտելու յուրաքանչյուր մակարդակի էական, բնութագրիչ, տարբերակիչ կողմերը և դրանց իրականացման արդյունավետության պայմանները:

2.2 Սոցիալական և կրթական հաղորդակցությունների միջոցները

Սոցիալական և կրթական հաղորդակցման արդյունավետությունը, անձի ձևավորման ու զարգացման հնարավորությունները կարող են պայմանավորված լինել, թե՛ անձի, թե՛ նրա հաղորդակիցների ակտիվությամբ, այսինքն՝ թե՛ ինչպես, ինչ ուղիներով և միջոցներով են հաղորդակցվում անձն ու նա հաղորդակիցները: Հաղորդակցման իրականացման ուղիների ձևավորման մեջ առանցքային նշանակություն ունեն տեղեկատվության կամ բովանդակային հաղորդման միջոցները: Պետրովան, Ստոյարենկոն, Պետրովսկին և այլոք գտնում են, որ հաղորդակցման միջոցները բաժանվում են 2 հիմնական տեսակների՝ խոսքային և ոչ խոսքային:

Դրանք շատ կարևոր են սոցիալական և կրթական հաղորդակցության մեջ: **Խոսքային և ոչ խոսքային միջոցները** հանդես են գալիս միասնաբար, դրանք կարող են լրացնել միմյանց, փոխարինվել մեկը մյուսով, և նույնիսկ հակադրվել ու հակասել իրար: Ինչպես նշում է հաղորդակցաբան Ադաիրը՝ մարդկային շփման ամբողջ հարստության հիմքը խոսքային և ոչ խոսքային միջոցների օրիգինալ համադրություն է: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ սոցիալական և կրթական հաղորդակցման գորընթացում տեղեկատվության միայն 7%-ն են կազմում

խոսքային միջոցները, իսկ մնացած 93%-ը կազմում են հաղորդակցման ոչ խոսքային միջոցները: Անդրենյան, Զանկովսկին, Տերտելը չափազանց կարևորել հաղորդակցման խոսքային միջոցներ, այն անվանում են հաղորդակցման համընդհանուր միջոց: Խոսքն առանձնահատուկ նշանակություն ունի ինչպես միջանձնային հաղորդակցման գործնթացում, այնպես էլ երեխայի անձի ձևավորման և զարգացման գործընթացում: Խոսքային միջոցներն այնքան են կարևորվում կրտսեր դպրոցականի անձի ձևավորման ու զարգացման գործընթացում, որ գիտության առանձին ճյուղ՝ հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան, զբաղվում է երեխայի խոսքի զարգացման խնդիրներով: Մանկավարժական գործընթացում առանձնահատուկ ուշադրության են արժանի ինչպես դասավանդողի խոսքը, այնպես էլ սովորողի խոսքը: Սոցիալական և կրթական հաղորդակցման մեջ հաղորդակցի խոսքային ներգործություններով են պայմանավորված նաև անձի հաղորդակցական ակտիվությունը կամ հակառակը, դրա արգելակումը: Վաղ մանկության տարիքից յուրացնելով լեզուն և կիրառելով խոսքը հաղորդակցման մեջ՝ մարդը տիրապետում է հաղորդակցման սկզբնական կարողությունների, որոնք նա ավելի է զարգանում հատկապես կրթական հաստատություններում: Անձի խոսքային կարողություններն ունեն 2 հիմնական բաղադրիչ՝

- կապված խոսքը կառուցելու կարողության ձևավորման հետ,
- խոսքի կիրառությունը հաղորդակցման մեջ:

Դեռևս անտիկ և հին ժամանակաշրջաններից հայտնի է, որ հաղորդակցումը դառնում է կատարյալ և ազդեցիկ ոչ խոսքային հաղորդակցման շնորհիվ: Ոչ խոսքային հաղորդակցումը նպաստում է սոցիալական և կրթական հաղորդակցման արդյունավետության բարձրացմանը: Ոչ խոսքային հաղորդակցումը լրացնում է խոսքային հաղորդակցումը: Սոցիալական և կրթական հաղորդակցման մեջ ոչ խոսքային միջոցները ունեն առանձնահատուկ նշանակություն, որովհետև դպրոցական տարիքի երեխաներն ավելի հազական և նրբազգաց: Նրանք առաջին հերթին ընկալում են մանկավարժի ոչ խոսքային ներգործությունները: Արդյունավետ սոցիալական և կրթական հաղորդակցման հաղորդակցման կազմակերպման և սովորողների անձի ձևավորման ու զարգացման գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունեն ոչ խոսքային մարմնաշարժողական, գեղագիտական, տարածական և լսողական միջոցները:

Այսպիսով՝ սոցիալական և կրթական հաղորդակցման մեջ առանց խոսքային և ոչ խոսքային միջոցների կիրառման անհնար է հաղորդակցման լիարժեք իրականացումը:

2.3 Բախումնային հաղորդակցում, պատճառները և հաղթահարման ուղիները

Կրթական գործընթացում հաղորդակցման կազմակերպումն ու իրականացումը որոշվում են հիմնականում մի շատ կարևոր ու առաջնային գործոնով՝ սովորողների համախմբվածությամբ և հասակակիցների հետ հաղորդակցման բնույթով: Հասակակիցները բոլորովին այլ կերպ և բավականին մեծ ազդեցություն են ունենում անձի, նրա սոցիալական վարքի, արժեքների և հարաբերությունների համակարգի վրա: Բոլոր դեպքերում հասակակիցների հաղորդակցումը արդյունավետ է, եթե այն համագործակցային է և կառուցողական: Առավել բարդ է հասակակիցների միջև բախումնային հաղորդակցումը, որը դրսևորվում է անհամաձայնության, պայքարի, մրցակցության և այլ ձևերով:

Արդի ժամանակաշրջանում գնալով աճում է բախումների առաջացման պատճառներին, ընթացքի առանձնահատկություններին և ելքերին նվիրված աշխատությունների թիվը, սակայն դեռևս գոյություն չունի համընդհանուր տեսություն, որը միանշանակորեն պարզաբանի բախումների առաջացման պատճառներն ու դրանց նշանակությունը: Ընդունելով, որ բախումները հասարակական կյանքի բնականոն ձևերն են, մասնագետներն անհրաժեշտ են համարում բախումնային իրավիճակների կարգավորման և հանգուցալուծման հոգեբանական մեխանիզմների մշակումը: Բախումնային իրավիճակներին լուծում տալու համար առաջարկվում է « խաղը՝ որպես լավագույն միջոց, որը դպրոցական տարիքում արդյունավետ է միայն 56%-ով»: Պետք է ստեղծվեն այնպիսի միջոցներ, որոնք ճկուն կլինեն և կհարմարվեն տարբեր իրավիճակների, նամանավանդ, որ արդեն 5 տարեկան հասակում երեխաները հասկանում են առաջարկված բախումների բնույթը, իսկ 8 տարեկանում նրանք կարողանում են հիմնավորել իրենց դիրքորոշումը և առաջ քաշել հիմնական պատճառները: Առաջին հերթին մեծահասակները՝ մանկավարժը ու ծնողները, պետք է տիրապետեն վարքի կառուցողական ձևերին, որպեսզի կարողանան կազմակերպել անձի կողմից դրանց յուրացման գործընթացը:

Առաջացած բախումը մեծահասակների կողմից հաջողվում է լուծել միայն 5-6 տարեկան երեխաների մոտ, որից հետո երեխաները ձգտում են ինքնուրույն « կարգավորել» իրավիճակը: Բախումնային իրավիճակներում սովորողները դրսևորում են վարքի տարբեր ձևեր՝ պայմանավորված տարիքով, անձնային որակներով, նյարդային համակարգի բնույթով, ընտանեկան դաստիարակությամբ: Ինչպես նկատում է բախումների ոլորտում մասնագիտացած Ն. Գրիշինան. «Անձի վարքի բախումնային ձևերը սովորում է շրջապատի մարդկանցից, հասարակական տարբեր ինստիտուտների ազդեցությամբ, հետևաբար, նրան կարոց ենք սովորեցնել նաև այլ ձևեր՝ առավել կառուցողական և խաղաղարար»: Սովորողը

փոխներգործության ընթացքում դիմում է իր կենսափորձում եղած վարքի ձևերին, որոնք շատ հաճախ կարող են լինել ոչ կառուցողական: Հաղորդակցման տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում սովորողին ձեռք բերել բավականին հարուստ փորձ և փոխներգործության տարբեր ձևերը վերլուծելու կարողության: Բախումային իրավիճակի պատճառ կարող է դառնալ սովորողի հոգեվիճակը, որը կարող է լինել ուշադրության պակասից: Անհրաժեշտ են ոչ միայն սովորողների միջև առաջացած բախումային իրավիճակների լուծում, այլև նախապես սովորողների վարքի մեջ հաղորդակցման առավել կառուցողական փոխներգործության ձևերի ամրակայում ֆիզիկականից մինչև իմացական մակարդակ, որը հնարավորության կտա ինքնուրույն դուրս գալ տարբեր իրավիճակներից ոչ միայն կրթական հաստատությունում, այլև դրանից դուրս: Շատ դասավանդողներ ուղղակիորեն խուսափում են բախումներից և սովորողների միջև առաջացած խնդիրները լուծելու փոխարեն նրանց անմիջապես սաստում են « ոչինչ չեմ ցանկանում լսել» . «այլևս նման բան չկրկնվի» և նման արտահայտություններով: Եթե մեծահասակն այդպես է ասում, ապա չկա ոչ մի երաշխիք, որ իսկակապես չեն կրկնվի նման իրավիճակները հենց նույն սովորողների միջև, որովհետև բախումները բնական կյանքում պարզապես անխուսափել են: « Հաճախ կարևոր է ոչ թե խուսափումը բախումային իրավիճակից, այլ շրջահայացորեն բախումային իրավիճակում վարքի ռազմավարության ընտրությունը և կողմերին համաձայնեման տանելը»: Դասավանդողը պետք է ցուցաբերի աչալրջություն , զգուշավորություն անարդարացի չպատժելու և բոլորի ներկայությամբ սովորողին չվիրավորելու համար: « Փորձը ցույց է տալիս, որ հաճախ մեխահասակները պարզապես փնտրում են իրավիճակի « մեղավորներին» և « արդարներին»՝ դառնալով դատավոր, հետևաբար, երեխաների մոտ ձևավորվում է ինքն իրեն պաշտպանելու մյուսին մեղադրելու ձգտում, որը մղում է նրանց ոչ կառուցողական վարքի»: Անհրաժեշտ է պարզել վիճաբանության պատճառ դարձած խնդիրը՝ առանց « մեղավորների» ու « արդարների»: Պետք է պարզել նման իրավիճակի պատճառը տարբեր տեսանկյուններից, որի ընթացքում կպարզվի նաև մեկ այլ շատ նուրբ հարց՝ սովորողներից ով է ընդունակ սուտ խոսելու: Սովորողների բախումային փոխներգործության նման բացասական կողմերը՝ սուտը, խորամանկությունը, խաբեությունը, դուրս են մնաում մեծահասակների ուշադրությունից: Բախումներ կարող են առաջանալ նաև դասավանդողի և սովորողի միջև: Կոնֆլիկտների առաջացման պատճառ կարող են հանդիսասանալ՝

- գնահատականը /դժգոհություն սովորողի կողմից/
- դասին անպատրաստ լինելը / դժգոհություն դասավանդողի կողմից/
- պարբերաբար ուշացումները / դժգոհություն դասավանդողի կողմից/
- ծնողների տրամադրվածությունը, որը քննարկվում է ընտանիքում և դիրքորոշում ձևավորում սովորողի մոտ:

Բախումներ կարող են առաջանալ նաև «դասավանդող-ծնող» փոխհարաբերություններում, որտեղ պատճառը կախված է հիմնականում

- երեխայի առաջադիմության,
- երեխայի վարքի,
- երեխայի թափթփվածության հետ:

3. Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն

Հետազոտական աշխատանքը իրականացվել է ՀՀ Արմավիրի մարզի գյուղ Գեղակերտի միջնակարգ դպրոցում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է որոշել աշակերտների այլ անձանց հետ շփման, հաղորդակցման մակարդակը, անձնական կամ գործնական հարաբերություններ հաստատելու և պահպանելու ունակությունը:


Հետազոտական աշխատանքը իրականացվել է «Շփման մակարդակը չափող մեթոդիկա» թեստի միջոցով (հավելված 1):

Հարցունք իրականացվել է 12-րդ, 11-րդ և 10-րդ դասարաններում:

Հարցմանը մասնակցել են 60 աշակերտներ՝ 37 աղջիկ, 23 տղա:


Ստացված արդյունքները ներկայացված են ստորև:

Այսպես հարցվածների 8%-ը ունեն հաղորդակցության ցածր մակարդակ:




Այս խմբի երեխաներն բնութագրվում են հետևյալ կերպ՝ Ձեր շփումը կրում է հիվանդագին բնույթ: Դուք շատախոս եք, շաղակրատ, խառնվում եք Ձեզ չառնչվող հարցերի: Դատողություններ եք անում նույնիսկ այնպիսի հարցերի շուրջ, որոնք դուրս են Ձեր իրավասությունից: Կամա թե ականա Դուք հաճախ եք Ձեր շրջապատում տարբեր վիճահարույց իրավիճակների պատճառ դառնում: Բռնկուն եք, նեղացկոտ, հաճախ սուբյեկտիվ: Լուրջ գործերը Ձեզ համար չեն: Թե՛ աշխատանքի վայրում, թե՛ տանը, թե՛ առհասարակ Ձեզ համար մարդկանց հետ շփվելը դժվար է: Դուք պետք է շտկեք Ձեր բնավորության գծերը: Առաջնահերթ սովորեք լինել համբերատար և զուսպ: Հարգանքով վերաբերվեք մարդկանց և մտածեք Ձեր առողջության մասին, քանզի այդպիսի կենսակերպը անհետևանք չի մնում:

Հարցվածների 10%-ը բնութագրվում են հետևյալ կերպ՝




Դուք չափազանց շփվող եք: Մշտապես տեղյակ եք բոլոր գործերից, սիրում եք մասնակցել բոլոր քննարկումներին, սակայն լուրջ թեմաները Ձեզ համար կարող են գլխացավանք լինել: Դուք խոսակցության թեման հաճույքով վերցնում եք Ձեր ձեռքը նույնիսկ հարցի մասին մակերեսային պատկերացում ունենալու դեպքում: Ամեն տեղ Ձեզ զգում եք «ինչպես ձուկը ջրում»: Յուրաքանչյուր գործի համար պատասխանատվություն եք վերցնում, բայց միշտ չէ, որ կարողանում եք գործն իր հաջող ավարտին հասցնել: Այդ իսկ պատճառով Ձեր ղեկավարները և աշխատակիցները Ձեզ փոքր-ինչ զգուշավորությամբ և կասկածանքով են վերաբերվում:

Հարցվածների 42%-ը պատասխանել են այսպես՝




Դուք շատ մարդամոտ եք (երբեմն նույնիսկ չափազանց), հետաքրքրասեր, շփվող, սիրում եք տարբեր թեմաների շուրջ արտահայտվել, որը երբեմն առաջացնում է շրջապատի դժգոհությունը: Շատ հեշտությամբ եք ծանոթանում այլ մարդկանց հետ: Սիրում եք լինել ուշադրության կենտրոնում: Ոչ մի խնդրանք չեք մերժում, թեև միշտ չէ, որ կարողանում եք այն կատարել: Պատահում է, որ շուտ բռնկվում եք, բայց շուտ էլ խաղաղվում: Լուրջ խնդիրների լուծման համար պակասում է համբերատարությունը, աշխատասիրությունը և քաջությունը: Ցանկության դեպքում, սակայն, կարող եք նաև չնահանջել:

Հարցվածների 20%-ը պատասխանել են այսպես՝




Ձեր շփման մակարդակը բնական և կանոնավոր է: Դուք հետաքրքրասեր եք, ուշադիր և մեծ հաճույքով լսում եք Ձեր զրուցակցին: Համբերատար եք, պնդում եք Ձեր տեսակետն առանց բռնկվելու: Մեծ հաճույքով ծանոթանում եք նոր մարդկանց հետ, բայց միևնույն ժամանակ չեք սիրում աղմկոտ միջավայրեր: Արտասովոր քմահաճույքները Ձեզ նյարդայնացնում են:

7%- պատասխանել են հետևյալ կերպ՝



Դուք բավականին շփվող եք և անձանոթ միջավայրում Ձեզ շատ վստահ եք զգում: Կյանքի նոր խնդիրները Ձեզ չեն վախեցնում: Միևնույն ժամանակ Դուք զգուշանում եք անձանոթներից, խուսափում եք վեճերի և բանավեճերի մեջ մտնելուց: Առանց որևէ պատճառի Ձեր արտահայտությունների մեջ գերակշռում է սարկազմը: Այդ թերությունը, սակայն, շտկելի է:


Հարցվածների 9%-ը պատասխանել են այսպես՝



Դուք ինքնամփոփ եք, լռակյաց, քչախոս, գերադասում եք միայնակ լինելը, այդ պատճառով էլ քիչ ընկերներ ունեք: Նոր աշխատանքը և նոր ծանոթները, եթե նույնիսկ Ձեզ խուճապի մեջ չզգեն, ապա հանում են հավասարակշռությունից: Դուք

գիտակցում էք դա և դժգոհ եք Ձեզանից: Մի՛ սահմանփակվեք դժգոհությամբ. Ձեր ուժերով կարող եք փոխել Ձեր խառնվածքի առանձնահատկությունները: Երբևէ չի՞ պատահել, որ Ձեր՝ ինչ-որ բանով հետաքրքրված լինելը առավել շփվող է դարձրել Ձեզ: Հարկավոր է միայն, որ վերահսկեք ինքներդ Ձեզ:

Հարցվածների վերջին 4%-ը պատասխանել են այսպես՝



Դուք ակնհայտ չշփվող մարդ եք, և դա է Ձեր դժբախտությունը, քանզի դրանից ավելի շատ հենց Դուք եք տանջվում: Բայց և Ձեր մտերիմների համար էլ հեշտ չէ: Խմբային ջանքեր պահանջող գործերը Ձեզ վստահելը դժվար է:

Եզրակացություն

- ✓ Ինքնազարգացող անձի ձևավորման նպատակը ենթադրում է, որ կրթական գործընթացը կլինի արդյունավետ, եթե կրթական գործընթացի վերանայումից և վերաիմաստավորումից հետո ոչ միայն տեսականորեն մշակվի, այլև գործնականում համարժեք միջանձնային հաղորդակցումն իրականացվի նոր՝ «կողմնորոշող սուբյեկտ-ինքնազարգացող սուբյեկտ» մոդուլով:
- ✓ Մարդկանց միջև հաղորդակցումն իրականացվում է վերբալ և ոչ վերբալ մեթոդների օգնությամբ
- ✓ Հաղորդակցման մակարդակների վերլուծությունը հնարավոր է տալիս բացահայտելու յուրաքանչյուր մակարդակի էական, բնութագրիչ, տարբերակիչ կողմերը և դրանց իրականացման արդյունավետության պայմանները:
- ✓ Հասակակիցների հաղորդակցումը արդյունավետ է, եթե այն համագործակցային է և կառուցողական: Առավել բարդ է հասակակիցների միջև բախումնային հաղորդակցումը, որը դրսևորվում է անհամաձայնության, պայքարի, մրցակցության և այլ ձևերով:

Օգտագործված գրականության ցանկ

- «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԴԵՐԸ ԴԵՌԱՀԱՍԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ» ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ա. Ա
- «Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում» Աննա Ալեքսանյան Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 264
- Ք²Օàð,²îð²Û °î ²ՔÊ²î²Û²ÚÆÛ ՊàðîàðÛ°àðÂÚ²Û ÀÛ,Ք²Ûàðð ՔØîàðÂÛàðÛ°ð î³Ăłçî Ê³ă³îñÛ³Ý
- Мухина В. С. Возрастная психология, М., 1999,
- <http://blognews.am/arm/news/187639/uzum-es-aveli-hesht-shpvel-u-haxordakcvel-karda-sa.html>
- http://paara.am/wp-content/uploads/2012/06/Gorcakan_haxordakcutyun.pdf
- <http://www.qayl.am/17-01-2016-05/>

Հավելված 1

«Շփման մակարդակը չափող մեթոդիկա»

1. Դուք պատրաստվում եք գործնական կամ սովորական հանդիպման: Ձեզ նյարդայնացնում է այդ հանդիպմանը երկար սպասելը:
2. Դժգոհություն և անհանգստություն առաջանում է Ձեզ մոտ, երբ պատրաստվում եք ինչ-որ ժողովի, հանրագումարի կամ նման այլ մեծ լսարանի առաջ զեկույցով, հաղորդագրությամբ կամ այլ տեղեկությամբ հանդես գալ:
3. Բժշկին այցելելը ձգձգում էք մինչև վերջին պահը:
4. Ձեզ առաջարկում են հանգստանալու գնալ մի քաղաք, որտեղ երբեք չեք եղել: Դուք կփորձե՞ք բոլոր հնարավոր ձևերով խուսափել այդ ուղևորությունից:
5. Մի՞րո՞ւմ էք բոլորին պատմել Ձեր ապրումների մասին:
6. Ձեզ նյարդայնացնում է, երբ փողոցում անձանոթը խնդրանքով դիմում է Ձեզ:
7. Դուք հակված եք մտածելու, որ կա այսպես կոչված «հայրերի և որդիների խնդիր», և տարբեր սերունդների մարդկանց դժվար է միմյանց հասկանալը:
8. Անհարմար կզգա՞ք Ձեզ ծանոթ անձին հիշեցնել այն մասին, որ նա մոռացել է վերադարձնել Ձեզանից մի քանի ամիս առաջ վերցրած պարտքը:
9. Սրճարանում կամ ռեստորանում Ձեզ անորակ սնունդ են մատուցել: Կլոնեք և սպասքը զայրացած ետ կհրե՞ք:
10. Միայնակ մնալով անձանոթի հետ՝ Դուք կլոնեք և ճնշված կզգաք Ձեզ, եթե նույնիսկ նա սկսի առաջինը խոսել:

11. Դուք նյարդայնանում եք հերթերից, որտեղ էլ որ դրանք լինեն: Թողնում և գնում եք:
12. Դուք կխուսափե՞ք մասնակացել մի ժողովի, որտեղ քննարկվում է ինչ-որ խնդրահարույց իրավիճակ:
13. Դուք ունե՞ք Ձեր անհատական խիստ գնահատականը մշակույթի, գրական ստեղծագործությունների, այլ քաղաքակրթությունների վերաբերյալ և ոչ մի այլ կարծիք հաշվի չե՞ք առնում:
14. Ձեզ լավ ծանոթ հարցի վերաբերյալ ակնհայտ սխալ արտահայտություն եք լսում: Կլռեք և բանավեճի մեջ չե՞ք մտնի:
15. Գործնական կամ այլ հարցով ինչ-որ մեկի խնդրանքը Ձեզ մոտ սրտնեղություն առաջացնում է:
16. Դուք առավել նախընտրում եք Ձեր տեսակետը (կարծիքը, գնահատականը) արտահայտել գրավոր կերպով:

Այո - 2 բալ

Ոչ - 0 բալ

Երբեմն - 1 բալ